

ՌԻՆՂ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Համազասպ Սիմոնյան
Հեռախոս՝ +374 93. 817755

Ռինդ գյուղը հիմնադրվել է 1800թ-ի սկզբներին, Շորգեցի Սիմոնի կողմից, որից հետո այնտեղ են հաստատվել Մելիք Բալին իր եղբայրներ Աղաբաբի և Գրիգորի հետ միասին, Զարգար Թադևոսը և այլ ընտանիքներ: Բնակչության մի մասի նախնիները 1828 թվականին գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Համաձայն 1910 թվականի «Կովկասյան օրացույցի»՝ 1908 թվականին Ռինդ գյուղի բնակչությունը կազմել է 468 մարդ: Այրել են բացառապես հայեր:

Սողանքի պատճառով 1967թ-ին գյուղը տեղափոխվել է և հիմնվել հին գյուղատեղիին հարող «Թափ» հանդամասում: Ներկայումս գյուղի վարչական տարածքը 4388.32 հա է:

Մարզկենտրոնից հեռավորությունը 25կմ է, մայրուղուց՝ 4կմ: Գտնվում է Վարդենիսի լեռնաշղթայի Արփայի հովիտը իջնող լեզվակաձև սարավանդի վրա, Ելփին գետի ջրահավաք ավազանում: Գյուղի տարածքում գտնվող Եղեգնալիճի մակերեսը 2,12 հեկտար է, իսկ հայելու բացարձակ բարձրությունը՝ 1458 մետր: Ռինդը սահմանակից է Ելփին, Չիվա, Արենի, Աղավնաձոր, Հորս, Թառաթումբ համայնքներին:

Գյուղի տարածքում պահպանվել են XII-XIII դարի եկեղեցու մնացորդներ, մատուռներ, XIII-XIV դարի խաչքարեր: Հյուսիս-արևելյան հատվածում է գտնվում հին հայկական Ուլգյուր բնակատեղին, որտեղ ծնվել է միջնադարի տաղանդաշատ ճարտարապետ, քանդակագործ, մանրանկարիչ Մոմիկը: Վերին Ուլգյուրում պահպանվել են 12-14-րդ դարերի խաչքարեր, գերեզմաններ և Սուրբ Ստեփանոս եկեղեցու հիմնապատերը:

Բնակավայրից մեկ կմ հյուսիս-արևմուտք գտնվում է Ջնդրախաչի պրիզմայաձև հարթակը, որը պաշտվել է որպես սրբատեղի: Այս բարձունքում զուգորդվում են քրիստոնեական և նախաքրիստոնեական հուշարձանները: Ջնդրախաչ սրբավայրում կան երկու մենհիրներ, իսկ հարթակի դեր է կատարում միջնադարյան տապանաքարը:

Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Զարգացած է հատկապես խաղողագործությունը և դեղձի արտադրությունը:

2009 թ-ից Ռինդ գյուղում գործում է «Ջորահ» գինեգործական ընկերությունը, որի արտադրած Zorah Karasi Areni Noir գինին 2012 թ-ին Բլումբերգ հեղինակավոր հանդեսի կողմից ճանաչվել է որպես աշխարհի 10 լավագույն գինիներից մեկը:

2013 թվականին Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման 17-ամյակի կապակցությամբ անցկացված «Տարվա լավագույն համայնք-2013» մրցանակաբաշխությունում Ռինդը ճանաչվել է որպես «Լավագույն գյուղական համայնք»: 2012 թ-ից յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամսին մեծ շուքով նշվում է գյուղի հիմնադրման օրը:

Գյուղի կենտրոնում է գտնվում փառքի պուրակը, որտեղ կանգնեցված են Հայրենական մեծ պատերազմի խորհրդանիշ անհայտ զինվորի հուշարձանը, Արցախյան ազատամարտի զոհերի և Մեծ Եղեռնի նահատակների հիշատակի խաչքարերը: Գործում է նորակառույց եկեղեցի, որի հարևանությամբ գտնվում է աղբյուր-հուշարձան:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, փոստ և բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Ռինդ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 55 հուշարձան: